Վասպուրականի, արևմտեան ԵՐՆՋԱԿ գաւառ Սիւնեաց, հարաւայինն՝ մասն ՃԱՂՈՒԿ գաւառի Նորին. այժմ 'ի ջրս վիճակս բաժանի. յորոց 'ի հիւսիսի արևմտից՝ 'ի հարաւոյ Շարուրայ կայ ԽՈՐ ԼԻՆ գիւղ. համանուն գիւղն բնակեալ է 'ի Թաթարաց կամ Թուրքաց, որպէս և այլքն, բայց ԱՌՆՈՒԵՐԴ գեղջ է, յորում են 43 տուն Հայք: — Յելից Խոքայ կայ ՄԱՒԱԶԻ-ԽԱԹՈՒՆ վիճակ 9 գիւղորայիւք առ Ճաղրոգետով որ 'ի լերանց Տարալաղզայ գայ և անցեալ 'ի հարաւոյ Նախիջևանայ Թափի յԵրասխ. յայմմէ կամ 'ի մէջ գետոյն կայ համանուն աւանն Ճաղրոկամ Ճաղրի 100 Թուրք և 130 հայ գերդաստանք:

151. Ի հարաւոյ Խոքայ և յելից Նորա և Մաւազիխաթունի կայ վիճակն ՆԱԽԻՋԵՒԱՆ, 60 գիւղորայիւք, յորում է ՆԱԽԻՋԵՒԱՆ քաղաքն գլխաւոր երկուց գաւառացն Նախիջևանայ և Տարալաղզայ, յայմմէ Ճաղրու գետոյ, 'ի բարձու ուրեմն 2630' Երասխեան դաշտի. քաղաք հին, և ըստ հասարակաց աւանդութեան Նախ-Իջևան Նոյի և բնակութիւն յետ ջրհեղեղին, առ որոյ հաստատութիւն ցուցա-



Նոյայ Շիրիմ. — Tombeau de Noé.

նեն և զԳերեզման Նորա առ դրամբ քաղաքին, աղիւսակերտ կիսաւեր շինած քառակուսի կամ ուղղանկիւնի. 12' տրամագծաւ. բայց ինձ 'ի բուն 'ի սորոս Արարատայ Թուի Նոյեանն Նախիջևան յիշատակեալն 'ի Յովսեպոսէ պատմչէ ՅԱ դարու, համանիշ յունական Թարգմանութեամբ. իսկ սա Թուի Նախճոյ-աւան քանզի և յաՃախս գրի Նախճաւան: Հայկազնեանն Տիգրան բնակեցոյց 'ի սմա զգերութիւնն Մարաց, և յետ այնորիկ բազում անցք անցին ընդ քաղաքս, յորս և եղերական հրկիզումն նախարարացն Հայոց յեկեղեցւոջ սորա 'ի բռնաւորաց Հագարու. յԺԳ դարէ և այսր բազում անգամ աւերեցաւ 'ի Թաթարաց, Պարսից և յՕսմանեանց և 'ի Ռուսաց՝ յառման Նորին 'ի ձեռաց Պարսից՝ որոց խան Նստէր և 'ի սմա: Ի մնացորդս շինիցն Նշանաւոր է դուռն գղեկի խանիցն կամ Ամթաբէկաց, շինեալ յԺԵ դարու, գունագոյն աղիւսաւարդ, կրկին մեկրայիւք և արաբացի արձանագրութեամբք. և հոյակապ շիրիմ կամ աշտարակն Ամթաբէկաց՝ վասն գեալ 'ի սատանութենէ 1840 ամին 12անգիւնի ձեւոովն 70' 'ի բարձու և 96' 'ի շրջաբերութիւն, 'ի գունագոյն աղիւսոց նկարատաՃուՃեալ, հարուստ քանդակաք և արձանագրութեամբք: Բնակիչք 6000, յորս իբր 2000 Հայք: Սահմանք քաղաքին Թէպէտև քարուտք, այլ բարեբերք են և զուարՃալիք: — Ի ԺԴ դարու հաստատեցաւ 'ի Նախիջևան ամթոռ հռովմէական արքեպիսկոպոսի Հայոց 'ի Դոմինիկեան կամ 'ի Քարոզչաց ուխտէ, որոց քարոզեալ 'ի գաւառիս և յԵրինջակ և 'ի Գողթն, աշակերտեցին գեղջս բազումս և հաստատեցին վանորայս. սոքա են Ռունիթոռքն կոչեցեալք կամ Ջահկեցիք, որք տևեցին ցԺԸ դար, և ապա այսր անդր ցրուեցան մնացորդք նոցա: Գլխաւոր ամթոռ նոցա Ջահուկ կամ Ճահուկ աւան յանուն գաւառի Սիւնեաց, յելից հիւսիսոյ Նախջևանու այժմ ամայացեալ է. անյիշատակ է և Շահպօնս կամ Շահպոնէայ գիւղ, յորում անուանի մենաստան նոցա յանուն Ծննդեան Տիրամօր:

152. Այժմու նշանաւոր տեղիք վիճակիս են ԱՍՏԱՊԱՏ առ խառնրդոլք Ճաղրու յԵրասխ, երբեմն քաղաքաւան նշանաւոր, և ըստ աւանդութեան՝ կոչեցեալ այնպէս վասն աստ պատանաց մարմնոց Ս. Վարդանանց, յորոց անուն կայ և եկեղեցի 'ի բերդին՝ զոր շինեաց Ապպաս Միրզա Շահ Պարսից վասն որոյ և Ապպասապատ կոչի. այժմ անչքեցեալ է քաղաքաւանն, և բերդն միայն կայ: Ի հարաւոյ սորա է անուանի մենաստանն Կարմիր Վանք յանուն Ս. Ստեփանոսի, մեծաւ եկեղեցեաւ յաղիւսոյ և 'ի կարմիր քարանց. շէն է մենաստանն նոր շինեալ 'ի սկիզբն անցելոյ դարու. և են առ նովաւ քարանձաւք 'ի ձորն Երասխայ, ուրանօր կառուցեալ են վանքն յ'2200' բարձու, վասն որոյ և Քարապանս վանք կոչին. 'ի գեղջն փոքրու որ առ նովաւ բնակին 20 երդ Հայք: — Հեկրէամ աւան բնակեալ յ'200 երդ մահմետականաց. Դաշտէնա 140 տուն հայ և 20 Թուրք. Կէ-լ-Ռէֆէ յահեկէ Ճաղրու գետոյ 75 երդ Հայովք. Գարախան-պէյլի 100 տուն հայ. Շաբարապատ, Հաշարապատ, Խալխալը, և այլն, բնակեալք 'ի Հայոց:

153. Յելից Նախիջևանու կայ ԱԼԸՆՃԱ վիճակ 24 գիւղորիւք առ համանուն գետակաւ երկայնեալ ընդ մէջ Երասխայ և Արաքսի և Այրարատեան Գարապաղու, և է ԵՐՆՋԱԿԱՆ գաւառ. որոյ հին բերդաւանն համանուն՝ այժմ ամայի ԱԼԸՆՃԱ-ԳԱՒԷՍԻ՝ կայ յայմմէ գետակին 'ի բարձու քարալերին, շինեալ Յերինջակայ ուսմնիկ Սիւնեաց տիկնոջէ 'ի հին ժամանակս. յԹ դարու պաշարեաց զսա ոստիկանն Յուսուֆ առնուլ զգանձս Սմբատայ Ա: Ի հարաւոյ Երինջակայ առ գետեզերքն կայ հին մենաստանն Ս. Գէորգ և նորն Ս. Սթէֆանոս շինեալ կամ նորոգեալ 'ի ԺԶ դարու: Երինջակ մի էր 'ի գլխաւոր ամթոռաց Ռունիթոռաց, և անուանի էր Ս. Կարապետ մենաստան և